600.0376.30.08.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 օգոստոսի 2017 թվականի №376Ա
քաղ. Երևան

«ԷՐՍՏԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի N308Ն որոշման 1-ին կետով հաստատված էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) №2 հավելվածի №2-2 ձևով նախատեսված՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն) էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ներկայացվում է կիսամյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը,

գ) «ԷՐՍՏԵԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի 1-ին կիսամյակի Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2017 թվականի հուլիսի 26-ին,

դ) Հանձնաժողովը Ընկերության կողմից Տեղեկատվության ներկայացման՝ Կարգով սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2017 թվականի օգոստոսի 3-ից վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 3-ի №ԱԲ-2040Ս գրությամբ,

ե) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Տեղեկատվության ներկայացման՝ Կարգով սահմանված ժամկետը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
30 օգոստոսի 2017թ.